

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ՆԻՍՏԻ

Ք.Երևան  
Ժ.11.00

15 մարտի 2011թ.

Մասնակցում էին՝ Երևանի ավագանու 48 անդամներ:

Նիստը վարում էր Երևանի քաղաքապետ Կ. Կարապետյանը:

Երևանի ավագանու նիստին հրավիրված էին՝ Երևանի քաղաքապետի տեղակալ Վ. Առաքելյանը, քաղաքապետի գլխավոր խորհրդական Դ. Մելքոնյանը, քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղար Վ. Ստեփանյանը, քաղաքապետի մամլո քարտուղար Շ. Սարգսյանը, աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Զ. Առաքելյանը, աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Ա. Ամյանը, աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Վ. Նիկոյանը, աշխատակազմի առևտրի և սպասարկումների վարչության պետ Ա. Սարգսյանը, աշխատակազմի արտաքին ձևավորման և գովազդի վարչության պետ Ա. Հարությունյանը, աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության պետ Ա. Գևորգյանը, աշխատակազմի Երևանի ավագանու գործունեությունն ապահովող աշխատանքների կազմակերպման բաժնի պետ Գ. Բաղդասարյանը և վարչական շրջանների ղեկավարները:

Նիստին ներկա էին ՀՀ ԶԼՄ-ի և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Քաղաքապետ Կ. Կարապետյանը հայտնեց, որ, հիմք ընդունելով Երևանի ավագանու «Բարգավաճ Հայաստան» խմբակցության ղեկավարի գրությունը, առաջարկվում է Երևանի ավագանու 2011 թվականի փետրվարի 8-ի «Երևանի ավագանու հինգերորդ նստաշրջանի հաշվիչ հանձնաժողովի կազմը հաստատելու մասին» հ.180-Ա որոշման մեջ կատարել փոփոխություն՝ Երևանի ավագանու «Բարգավաճ Հայաստան» խմբակցության անդամ Իշխան Դարբինյանի փոխարեն ժամանակավոր հաշվիչ հանձնաժողովի կազմում ընդգրկել Արմեն Հակոբյանին:

Առաջարկն ընդունվեց միաձայն:

1. Երևանի քաղաքապետ Կ. Կարապետյանը ներկայացրեց Երևանի ավագանու 2011 թվականի մարտի 15-ի նիստի օրակարգի նախագիծը՝ առաջարկելով օրակարգի նախագծից հանել 15, 16, 18, 19 հարցերը:

**ՈՐՈՇՎԵՑ** – Հաստատել Երևանի քաղաքապետի առաջարկությունը և Երևանի ավագանու 5-րդ նստաշրջանի 2-րդ նիստի օրակարգում ընդգրկել հետևյալ հարցերը.

2. Երևան քաղաքի 2010 թվականի բյուջեի կատարման հաշվետվությունը հաստատելու մասին:

3. Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի դեկտեմբերի 23-ի հ.169-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

4. Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հուլիսի 6-ի հ.3-Ա որոշման մեջ լրացում և փոփոխություն կատարելու մասին:

5. Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հուլիսի 6-ի հ.4-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

6. Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի նոյեմբերի 26-ի հ.161-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

7. Գումար հատկացնելու մասին:

8. Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 23-ի հ.55-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

9. Երևանի ենթակայության մի շարք Փակ բաժնետիրական ընկերություններ Երևան քաղաքի վարչական շրջանների ղեկավարների ենթակայությանը հանձնելու և լիազորություններ պատվիրակելու մասին:

10. Երևան քաղաքի առևտրի և սպասարկման ոլորտի կազմակերպությունների որակավորման աստիճանների չափորոշիչներն ու շնորհման կարգը հաստատելու մասին:

11. «Երևանի քաղաքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի, Երևանի ենթակայության առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների լրիվ մաշված /օգտագործման համար ոչ պիտանի/ գույքի դուրսգրման կարգը հաստատելու և Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 23-ի հ.55-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

12. «Շենգավիթ համայնքի «Շենգավիթ-Մաքրություն» և «Ավան համայնքի «Կանաչապատում» Փակ բաժնետիրական ընկերությունները վերանվանելու մասին:

13. Երևան քաղաքի վարչական շրջանների ղեկավարներին լիազորություններ պատվիրակելու մասին:

14. Երևանի քաղաքապետի 2011 թվականի փետրվարի 28-ի N594-Ա որոշմանը համաձայնություն տալու մասին:

15. Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի նոյեմբերի 18-ի հ.37-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին:

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ** – կողմ – 48

դեմ – 0

ձեռնպահ – 0

**Որոշումն ընդունվեց միաձայն**

**2. ԼՍԵՑԻՆ** - Երևան քաղաքի 2010 թվականի բյուջեի կատարման հաշվետվությունը հաստատելու մասին:

**ԶԵԿՈՒՑԵՑ** - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Վ. Նիկոյանը:

**ՈՐՈՇՎԵՑ** - Հաստատել Երևան քաղաքի 2010 թվականի բյուջեի կատարման հաշվետվությունը՝ համաձայն NN1-5 հավելվածների /կցվում է/:

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ** – կողմ – 48

դեմ – 0

ձեռնպահ – 0

**Որոշումն ընդունվեց միաձայն**

**3. ԼՍԵՑԻՆ** - Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի դեկտեմբերի 23-ի հ.169-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

**ԶԵԿՈՒՑԵՑ** - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Վ. Նիկոյանը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ** - Երևանի ավագանու քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ Հ.Պողոսյանը:

**ՈՐՈՇՎԵՑ** - 1.Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի դեկտեմբերի 23-ի «Երևան քաղաքի 2011 թվականի բյուջեի մասին» N 169-Ն որոշմամբ հաստատված.

- 1) Եկամուտների գումարն ավելացնել 930,813.1 հազ. դրամով,
- 2) ծախսերի գումարն ավելացնել 1,641,081.2 հազ. դրամով,
- 3) դեֆիցիտի (պակասուրդի) գումարն ավելացնել 710,268.1 հազ. դրամով:

2.Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի դեկտեմբերի 23-ի «Երևան քաղաքի 2011 թվականի բյուջեի մասին» N 169-Ն որոշմամբ հաստատված NN 1, 2, 3, 4, 5, 6 և 7 հավելվածներում կատարել փոփոխություններ՝ համաձայն սույն որոշման համապատասխանաբար NN 1, 2, 3, 4, 5, 6 և 7 հավելվածների:

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ** – կողմ – 48

դեմ – 0

ձեռնպահ – 0

**Որոշումն ընդունվեց միաձայն**

**4. ԼՍԵՑԻՆ**- Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հուլիսի 6-ի հ.3-Ա որոշման մեջ լրացում և փոփոխություն կատարելու մասին:

**ԶԵԿՈՒՑԵՑ**-Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Վ.Նիկոյանը:

**ՈՐՈՇՎԵՑ**-1.Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հուլիսի 6-ի «Երևանի քաղաքապետարանի աշխատակազմ» համայնքնային կառավարչական հիմնարկ ստեղծելու, Երևանի քաղաքապետարանի և Երևանի վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի կանոնադրությունները, դրանց կառուցվածքն ու հաստիքացուցակը հաստատելու մասին» N3-Ա որոշման մեջ կատարել հետևյալ լրացումը և փոփոխությունը.

1) Որոշման N3 հավելվածում «Լ.Կառուցվածքային ստորաբաժանումներ» գլխի «1. Վարչություններ» կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 23-րդ կետով.

«23) «Գնումների վարչություն»:

2) Որոշման N4 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի /կցվում է/:

2. Սույն որոշման.

1) 1-ին կետի 1-ին ենթակետն ուժի մեջ է մտնում Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարար-փոխվարչապետի իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:

2) 1-ին կետի 2-րդ ենթակետն ուժի մեջ է մտնում 2011 թվականի ապրիլի 1-ից:

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ** – կողմ – 48

դեմ – 0

ձեռնպահ – 0

**Որոշումն ընդունվեց միաձայն**

5. **ԼՍԵՑԻՆ** - Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հուլիսի 6-ի հ.4-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

**ԶԵԿՈՒՑԵՑ**-Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Վ. Նիկոյանը:

**ՈՐՈՇՎԵՑ** - 1. Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հուլիսի 6-ի «Երևանի քաղաքապետի, քաղաքապետի տեղակալների, քաղաքապետարանի աշխատակազմի աշխատակիցների, վարչական շրջանների ղեկավարների, ղեկավարների տեղակալների, վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի աշխատակիցների պաշտոնային դրույքաչափերը սահմանելու մասին» N4-Ա որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2011 թվականի ապրիլի 1-ից:

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ** – կողմ – 48

դեմ – 0

ձեռնպահ – 0

**Որոշումն ընդունվեց միաձայն**

**6. ԼՍԵՑԻՆ**- Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի նոյեմբերի 26-ի հ.161-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

**ՈՐՈՇՎԵՑ** - Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի նոյեմբերի 26-ի «Երևանի վարչական շրջանների ղեկավարներին կից խնամակալության և հոգեբարձության հանձնաժողովների անհատական կազմերը հաստատելու մասին» հ.161-Ա որոշման 3-րդ հավելվածի «Հարություն Խաչատրյան» բառերը փոխարինել «Արարատ Մարգսյան» բառերով:

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ** – կողմ – 48

դեմ – 0

ձեռնպահ – 0

**Որոշումն ընդունվեց միաձայն**

**7. ԼՍԵՑԻՆ**- Գումար հատկացնելու մասին:

**ԶԵԿՈՒՑԵՑ**-Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Վ.Նիկոյանը:

**ՈՐՈՇՎԵՑ-1**.Երևան քաղաքի 2011 թվականի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից 2011 թվականի առաջին եռամսյակում հատկացնել 52,000.0 հազ. դրամ՝ սոցիալական և բարեգործական ծրագրեր իրականացնող կազմակերպություններին աջակցելու նպատակով՝ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» հոդվածով:

2.Թույլատրել Երևանի քաղաքապետին սահմանել սույն որոշմամբ հատկացված գումարի բաշխումը՝ ըստ Երևան քաղաքի վարչական շրջանների և ստացող կազմակերպությունների:

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ** – կողմ – 48

դեմ – 0

ձեռնպահ – 0

**Որոշումն ընդունվեց միաձայն**

**8. ԼՄԵՑԻՆ** - Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 23-ի հ.55-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

**ԶԵԿՈՒՑԵՑ** - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Ա.Ամյանը:

**ՈՐՈՇՎԵՑ** - 1. Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 23-ի «Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման 2010 թվականի ծրագրի վերաբերյալ» N 55-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 35-րդ կետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

«35.Վարձակալության կամ կառուցապատման իրավունքով տրամադրվող հողամասերի տարեկան վարձավճարի չափը սահմանվում է հողամասերի կադաստրային արժեքի՝

1) հողի վարձակալության դեպքում՝

ա. սրճարանների զբաղեցրած հողամասերի համար՝ 10 տոկոս.

բ. բենզալցման կայանների զբաղեցրած հողամասերի համար՝ 20 տոկոս.

գ. տաղավարների, կրպակների զբաղեցրած հողամասերի համար՝ 5 տոկոս.

դ. ավտոտնակների զբաղեցրած հողամասերի պայմանագրի ժամկետի ավարտից հետո մինչև 31.12.2015թ՝ 3 տոկոս.

ե. արտադրական նպատակային նշանակության տարածքների զբաղեցրած հողամասերի համար՝ 3 տոկոս.

զ. բակային տարածքներում հասարակական նպատակային նշանակության քարե կառույցների, ինչպես նաև քարե շինությունների զբաղեցրած հողամասերի համար՝ 5 տոկոս.

է. էներգետիկայի, կապի և այլ ենթակառուցվածքների զբաղեցրած հողամասերի համար՝ 5 տոկոս.

ը. գովազդային վահանակներով զբաղեցված հողամասերի համար՝ 40 տոկոս.

թ. ընդերք օգտագործման լիցենզիա ունեցող սուբյեկտների զբաղեցրած հողամասերի համար՝ 7 տոկոս:

2) կառուցապատման իրավունքով տրամադրելու դեպքում՝

ա. սրճարանների զբաղեցրած հողամասերի համար՝ 10 տոկոս.

բ. բենզալցման կայանների զբաղեցրած հողամասերի համար՝ 20 տոկոս.

գ. տաղավարների, կրպակների զբաղեցրած հողամասերի համար՝ 5 տոկոս.

դ. ավտոտնակների զբաղեցրած հողամասերի պայմանագրի ժամկետի ավարտից հետո մինչև 31.12.2015թ` 3 տոկոս.

ե. արտադրական նպատակային նշանակության տարածքների զբաղեցրած հողամասերի համար` 3 տոկոս.

զ. բակային տարածքներում հասարակական նպատակային նշանակության կառույցների զբաղեցրած հողամասերի համար` 5 տոկոս.

է. էներգետիկայի, կապի և այլ ենթակառուցվածքների զբաղեցրած հողամասերի համար` 5 տոկոս.

ը. հասարակական նպատակային նշանակության քարե շինությունների զբաղեցրած հողամասերի համար 5 տոկոս.

թ. գովազդային վահանակներով զբաղեցված հողամասերի համար` 40 տոկոս:

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ** – կողմ – 48

դեմ – 0

ձեռնպահ – 0

**Որոշումն ընդունվեց միաձայն**

**9. ԼՍԵՑԻՆ** - Երևանի ենթակայության մի շարք փակ բաժնետիրական ընկերություններ Երևան քաղաքի վարչական շրջանների ղեկավարների ենթակայությանը հանձնելու և լիազորություններ պատվիրակելու մասին:

**ԶԵԿՈՒՑԵՑ** - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Զ. Առաքելյանը:

**ՈՐՈՇՎԵՑ** - 1. Երևանի ենթակայության մի շարք փակ բաժնետիրական ընկերություններ հանձնել Երևանի վարչական շրջանների ղեկավարների ենթակայությանը` համաձայն հավելվածի:

2. Երևանի վարչական շրջանների ղեկավարներին պատվիրակել Երևանի քաղաքապետին վերապահված` «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 52-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածի 1-ին կետի «դ», «թ», «ժդ», «ժե», «ժզ» ենթակետերով նախատեսված լիազորությունները և բաժնետոմսերի կառավարման լիազորությունը, բացառությամբ բաժնետոմսերի օտարման և (կամ) գրավադրման, ինչպես նաև

ընկերությունների գույքի օտարման համաձայնություն (թույլտվություն) տալու լիազորությունների:

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ** – կողմ – 48

դեմ – 0

ձեռնպահ – 0

**Որոշումն ընդունվեց միաձայն**

**10. ԼՍԵՑԻՆ** - Երևան քաղաքի առևտրի և սպասարկման ոլորտի կազմակերպությունների որակավորման աստիճանների չափորոշիչներն ու շնորհման կարգը հաստատելու մասին:

**ԶԵԿՈՒՑԵՑ** - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի առևտրի և սպասարկումների վարչության պետ Ա.Սարգսյանը:

**ՈՐՈՇՎԵՑ** - 1.Սահմանել Երևան քաղաքի առևտրի և սպասարկման ոլորտի կազմակերպությունների որակավորման աստիճանների չափորոշիչներն ու շնորհման կարգը՝ համաձայն հավելվածի /կցվում է/:

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին Երևան քաղաքի առևտրի և սպասարկման ոլորտի կազմակերպություններին որակի աստիճաններ շնորհելու գործընթացը կազմակերպելու համար ստեղծել համապատասխան հանձնաժողով:

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ** – կողմ – 48

դեմ – 0

ձեռնպահ – 0

**Որոշումն ընդունվեց միաձայն**

**11. ԼՍԵՑԻՆ**-«Երևանի քաղաքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի, Երևանի ենթակայության առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների լրիվ մաշված /օգտագործման համար ոչ պիտանի/ գույքի դուրսգրման կարգը հաստատելու և Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 23-ի հ.55-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

**ԶԵԿՈՒՑԵՑ** - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Վ. Նիկոյանը:

**ՈՐՈՇՎԵՑ** - 1. Հաստատել «Երևանի քաղաքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի, Երևանի ենթակայության, այդ թվում նաև Երևան քաղաքի վարչական շրջանների ղեկավարների ենթակայության առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների լրիվ մաշված (օգտագործման համար ոչ պիտանի) գույքի դուրսգրման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 23-ի «Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման 2010 թվականի ծրագրի վերաբերյալ» N55-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 12-րդ կետը:

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ** – կողմ – 48

դեմ – 0

ձեռնպահ – 0

**Որոշումն ընդունվեց միաձայն**

**12. ԼՍԵՑԻՆ**-«Շենգավիթ համայնքի «Շենգավիթ-Մաքրություն» և «Ավան համայնքի «Կանաչապատում» Փակ բաժնետիրական ընկերությունները վերանվանելու մասին:

**ՈՐՈՇՎԵՑ-1.**«Շենգավիթ համայնքի «Շենգավիթ-Մաքրություն» և «Ավան համայնքի «Կանաչապատում» փակ բաժնետիրական ընկերությունները վերանվանել համապատասխանաբար «Շենգավիթ-կանաչապատում» և «Ավան-կանաչապատում» փակ բաժնետիրական ընկերությունների:

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սահմանված կարգին համապատասխան ապահովել կազմակերպությունների ֆիրմային անվանումների պետական գրանցման հետ կապված անհրաժեշտ գործառույթների և ձևակերպումների իրականացումը:

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ** – կողմ – 48

դեմ – 0

ձեռնպահ – 0

**Որոշումն ընդունվեց միաձայն**

**13. ԼՍԵՑԻՆ** - Երևան քաղաքի վարչական շրջանների ղեկավարներին լիազորություններ պատվիրակելու մասին:

**ԶԵԿՈՒՑԵՑ** - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Զ. Առաքելյանը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ** - Երևանի ավագանու քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ Հ. Պողոսյանը:

**ՈՐՈՇՎԵՑ** - 1. «Քաղաքացիական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածով (բացառությամբ «ե» կետի) և «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով նախատեսված Երևանի քաղաքապետի լիազորությունները պատվիրակել Երևանի վարչական շրջանների ղեկավարներին:

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ** – կողմ – 48

դեմ – 0

ձեռնպահ – 0

**Որոշումն ընդունվեց միաձայն**

**14. ԼՍԵՑԻՆ** - Երևանի քաղաքապետի 2011 թվականի փետրվարի 28-ի N594-Ա որոշմանը համաձայնություն տալու մասին:

**ԶԵԿՈՒՑԵՑ** - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Վ. Նիկոյանը:

**ՈՐՈՇՎԵՑ** - Համաձայնություն տալ Երևանի քաղաքապետի 2011 թվականի փետրվարի 28-ի «Երևանի քաղաքապետի 2010 թվականի մայիսի 27-ի N2121-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N594-Ա որոշմանը:

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ** – կողմ – 48

դեմ – 0

ձեռնպահ – 0

**Որոշումն ընդունվեց միաձայն**

**15. ԼՍԵՑԻՆ** - Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի նոյեմբերի 18-ի հ.37-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին:

**ԶԵԿՈՒՑԵՑ** - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի արտաքին ձևավորման և գովազդի վարչության պետ Ա.Հարությունյանը:

**ՈՐՈՇՎԵՑ** - 1.Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի նոյեմբերի 18-ի «Երևան քաղաքի վարչական շրջանների ղեկավարներին լիազորություն պատվիրակելու և արտաքին գովազդի տեղաբաշխման /տեղադրման/ համայնքային կանոնները հաստատելու մասին» N 37-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 12-րդ կետի դ) ենթակետը ուժը կորցրած ճանաչել:

2.Հավելվածի 18-րդ կետում «վարչության կողմից համաձայնություն տրված ուրվանկարները» բառերից հետո լրացնել «սահմանված չափի տեղական տուրքի վճարումը հաստատող փաստաթուղթը,» բառերը:

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ** – կողմ – 48  
դեմ – 0  
ձեռնպահ – 0

**Որոշումն ընդունվեց միաձայն**

Երևանի քաղաքապետ Կ.Կարապետյանն առաջարկեց Երևանի ավագանու հերթական նիստը գումարել 2011 թվականի ապրիլի 8-ին ժամը 11.00-ին:

Առաջարկն ընդունվեց միաձայն:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ**

**Կ.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**

Արձանագրեց՝  
Ն. Ղուկասյանը